

ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ
ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ


ՄԱՐԿԱԿԱՆԱԿՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿՐԻՆՍԻ
ԱՐԿԻՎԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈՐ ՉԱԲՐՅԱՆ

**ՂՎՐՎՐՎՂՅՎՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒ
ՀՎՅ-ԹՈՒՐՔՎԿՎՆ
ՀՎՐՎԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՎՄՎՏԵՔՍՏՈՒՄ**

A II
85080



Երևան 1998

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր. Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն
ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Մեկնաստությամբ
Արմեն և Բերսաբե Ճերեճեան Հիմնադրամի
ԱՄՆ

This Publication was made possible by
Armen and Bersabe Jerejian Foundation Inc.
USA

Սառը պատերազմի տարիներին Թուրքիան Միջին Արևելքում Արևմուտքի համար ռազմաքաղաքական հենակետի դեր էր կատարում: Միաժամանակ նա ՆԱՏՕ-ի միջնաբերդն էր ընդդեմ ԽՍՀՄ-ի: Արևմուտքը, օգտագործելով նրա էքոնոմշակութային կապերը միութենական թուրքալեզու հանրապետությունների հետ Անդրկովկասում և Միջին Ասիայում, մշտական սպառնալիքի տակ էր պահում Մոսկվայի շահերը:

Արևմուտքին մատուցելով համապատասխան ծառայություն Թուրքիան փոխարենը վայելում էր նրա տնտեսական, քաղաքական ու ռազմական աջակցությունը: Այլ կերպ ասած տարածաշրջանում Թուրքիայի ազդեցիկ դիրքը պայմանավորված էր արևմտյան տերությունների քաղաքական ծրագրերում զբաղեցրած տեղով և Արևելք-Արևմուտք դիմակայությունը երաշխավորում էր այդ տեղի կայունությունը:

Քանի դեռ շարունակվում էր սառը պատերազմը, Թուրքիան Արևմուտքում իր տեղն ու դերը կարևորելու հարց, որպես այդպիսին, չուներ: Սակայն 90-ական թթ. սկզբին համաշխարհային քաղաքականությունն ականատես եղավ շրջադարձային տեղաշարժերի: Հիմնովին փոխվեց ռազմաքաղաքական իրավիճակը միջազգային ասպարեզում: Քաղաքական զարգացումների ընթացքը հանգեցրեց այսպես կոչված նոր աշխարհակարգի ձևավորմանը, որն ընդհանուր գծերով ենթադրում էր աշխարհի քաղաքական համակարգը միաձուլել համապարփակ (գլոբալ) մեկ համակարգի մեջ, որպեսզի հնարավոր լինի գերիշխող քննից դեկավարել դրա գործունեությունը: Այդ իմաստով պատահական չէր սառը պատերազմի ավարտին «աշխարհին ուղղություն տալու» ռազմավարության հերթական տարբերակի օրակարգի հարց դառնալը ԱՄՆ-ի համար:

1991թ. սկզբին Վարչական ուխտը լուծարվեց: Մինչ այդ, տեղի տալով Արևմուտքին, ԽՍՀՄ-ը միացել էր ԱՄՆ-ի գլխավորած հակաիրաքյան դաշինքին: Սա, եթե ոչ համայնավարական համակարգի քայքայման, ապա Արևելք-Արևմուտք մրցապայքարում վերջինիս հաղթանակի լուրջ փաստարկ էր: Դրանով ականա ազդարարվում էր երկրագնդի վրա երկընեռ համակարգից միաբնեռի անցման անխուսափելիությունը: 1991թ. օգոստոսին լուծարվեց ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցությունը: Նույն թվականի դեկտեմբերի 21-ին նախկին միութենական հանրապետությունների մասնակցությամբ կազմավորվեց Անկախ Պետությունների Դամագործակցությունը: Թերևս դրանով էլ վերջ տրվեց Խորհրդային Միության տանջալից հոգեվարքին:

Վարչական ուխտի լուծարումը նշանավորվեց սառը պատերազմի ավարտով, իսկ ԽՍՀՄ-ի փլուզմամբ քայքայվեց համայնավարական համակարգը: Այս ամենը հիմք էր տալիս ենթադրելու, թե ՆԱՏՕ-ի միջազգային ազդեցությունը կնվազի, և Թուրքիան համապատասխանաբար կկորցնի իր երբեմնի նշանակությունը Արևմուտքի քաղաքական ծրագրերում: Պաշտոնական Անկարան խոսնակի էր մատնվել: Միաբնեռ համակարգի հաստատումը, սակայն, զերազանցեց բոլոր ենթադրությունները: ՆԱՏՕ-ն ոչ միայն չթուլացավ, այլև համայնավարական համակարգի քայքայման պայմաններում դեպի Արևելք ծավալվելու հնարավորություն ստացավ: ՆԱՏՕ-ի ծավալմանը զուգընթաց Թուրքիայի նշանակությունը Արևմուտքում հետզհետե աճեց: Իսկ ռուսական ազդեցության ոլորտների կրճատման ամերիկյան միտումները եկան կարևորելու նրա դերը: Այլ կերպ ասած՝ նոր աշխարհակարգը նոր հեռանկարներ քայքայեց Թուրքիայի առջև:

1991թ. դեկտեմբերին, երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց, նրա իրավաժառանգորդ Ռուսաստանի Դաշնությունը հայտնվեց Արևմուտքի ուշադրության կենտրոնում: Ռուսական գործոնի վերականգնման

սպառնալիքի շեղորացումը դարձավ արևմտյան տերությունների օրախնդիրը: Դա նրանց տեսանկյունից ենթադրում էր սոցիալիստական ճամբարի երկրներին Մոսկվայի ազդեցության ոլորտից դուրսբերում և Բալկանյան թերակղզի ուսաների հնարավոր վերադարձի կասեցում: Քանի որ Ռուսաստանի հաղորդակցությունը Բալկանների հետ ապահովում էին Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները, ուստի ուսական ազդեցությունից նրանց դուրսբերման հարցում վերջիններս առաջնայնություն ստացան: Այսպիսով, Արևմուտքը խՍՀՄ-ի փլուզման պայմաններում վերանայեց Արևելքի նկատմամբ իր դիրքորոշումը: Երա արևելյան քաղաքականության մեջ առանձնակի կարևորվեց Վարչավյան ուխտի երկրների հետ տնտեսական սերտաճման առաջադրանքը, որպեսզի հնարավոր լինի դրանց աստիճանաբար ներքաշել քաղաքական ուղեծրի մեջ: Առաջադրանքի իրագործման անհրաժեշտ նախապայմանը Արևելյան Եվրոպայից ուսաների ուշադրության պարտադիր շեղումն էր: Իսկ շեղման թերևս լավագույն միջոցը Մոսկվայի ռազմաքաղաքական «նկղտումների» ուղղորդումն էր հարավ, հարուցելով հավելյալ դժվարություններ Անդրկովկասում, Միջին Ասիայում և հարակից շրջաններում:

Այս ամենի առումով պատահական չէր թուրք-իրանական մրցապայքարի հրահրումն ու ռազմաքաղաքական իրավիճակի հետևողականորեն սրումն այնպիսի թեժ կետերում, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղը, Աբխազիան ու Չճենիան Անդրկովկասում, Տաջիկստանը Միջին Ասիայում: Առավել ևս պատահական չէր իսլամ ժայրահեղականների թալիբների աննախադեպ ակտիվությունն Աֆղանստանում և Տաջիկստանի կայունության պայմանավորումն աֆղանական գործողությունների շարժառիթային կապերը Անդրկովկասի և Միջին Ասիայի թուրքալեզու հանրապետությունների հետ, անմիջական հարևանությունը ուսական գերազդեցության ոլորտներին և տարածաշրջանում ԱՄՆ-ի լիազոր ներկայա-

ցուցչության պարագան, որպես Ռուսաստանի ուշադրության շեղման միջոց, կարևոր նշանակություն հաղորդեց Թուրքիային: Այդ մոտեցումը, որպես կամուրջ Ռուսաստանի և Միջին Արևելքի միջև, միանգամայն կարևորեց Անդրկովկասը: Քանի որ Ադրբեյջանին վերապահվում էր Միջին Ասիա ներթափանցման ցատկահարթակի դերը, ուստի և Անդրկովկասում ինքնաքերաքար կարևորեց նաև թուրքալեզու այդ հանրապետությունը: Այդպիսով, Արևելյան Եվրոպայում ռուսական գործոնի վերականգնման սպառնալիքի չեզոքացման հարցի հետ Արևմուտքի օրակարգում հայտնվեց նաև Անդրկովկասն ու Միջին Ասիան Թուրքիայի միջոցով Ռուսաստանի ազդեցությունից պաշտպանելու հարցը: Այդ հարցի դրական լուծումը պայմանավորված էր նշված տարածաշրջաններում թուրքական գործոնի ակտիվությամբ, ինչին, հատկանշական է, ակամա նպաստեց հենց Մոսկվան:

1991թ. մարտի 12-ին, երբ դեռ ԽՍՀՄ-ը վերջնականապես փլուզված չէր, Թուրքիայի նախագահ Թուրգուօ Օզալը Մոսկվայում ստորագրեց «Բարեկամության, բարի կամքի և համագործակցության» մասին խորհրդա-թուրքական պայմանագիրը: Դրան հետևեց Օզալի պաշտոնական այցը Միացյալ Նահանգներ: Նույն թվականի մարտի 23-24-ին նա հանդիպումներ անցկացրեց նախագահ Ջորջ Բուշի հետ, որի արդյունքում ստորագրվեց «թուրքամերիկյան ռազմավարության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը»: Ըստ այդ համաձայնագրի, Անդրկովկասն ու Միջին Ասիան ազդարարվեցին թուրքական ազդեցության գոտի: Այնուհետև Թուրքիան ԱՄՆ-ի օրինությամբ Արևմուտքի կողմից իբրև տնտեսական և քաղաքական մոդել առաջադրվեց նախկին խորհրդային միութենական թուրքալեզու հանրապետություններին: Դեռ ավելին. Թուրքիան Անդրկովկասում դիտարկվեց որպես խաղաղության պահպանման միակ երաշխավորը և դարաբաղյան հակամարտության կարգավորումը պայմա-

նավորվեց նրա միջնորդությամբ: Այսպիսով, քուրջական գործոնը դարձավ Անդրկովկասում և Միջին Ասիայում Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցությունը սահմանափակելու, առավել ևս Ռուսաստանի քաղաքական ակտիվությունը կանխելու հուսալի միջոց:Վ

Այդ գործոնի արդյունավետ օգտագործումը ենթադրում էր Անկարային համապատասխան դերի հատկացում, ինչը ԽՍՀՄ-ի փլուզմանը զուգընթաց ստացավ «Ադրբիստանի կից մինչև Չինական ծով» ձևակերպումը: Թուրքիան անձայրածիր տարածքում ստանձնած այդ դերով ակնհայտորեն վտանգում էր ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանի շահերը ոչ միայն Անդրկովկասում ու Միջին Ասիայում, այլև Բալկաններում: Դա հիմք էր տալիս ենթադրելու, որ Ռուսաստանը հակաազդեցություն առաջ կբերի, ինչի հետևանքով հակասությունները ռուս-թուրքական փոխհարաբերություններում կսրվեն: Մակայն, Անդրկովկասում և Միջին Ասիայում միջազգային ուժերի քաղաքական նկրտումներով հրահրված թուրք-իրանական մրցապայքարը, որ շահագրգիռ կողմերի քմահաճույքով ստացավ իսլամ արմատականության դեմ աշխարհիկության հակադրման ձևակերպում, քոլորովին անսպասելի արդյունք տվեց: Հակառակ ենթադրություններին, Թուրքիան ոչ թե բախվեց Ռուսաստանի դիմակայությանը, այլ այդ մրցապայքարում վայելեց նրա աջակցությունը: «Դյուրդիյեթի» գործադիր տնօրեն էր-թուրքուլ Օզքյոզը, նույն թերթի 1991թ. մարտի 1-ի համարում միանշանակ գրում էր. «Մտորիրդային ղեկավարները մասնավոր գրույցներում և պաշտոնական հայտարարություններում քազմիցս ընդգծել են, որ իրենք միութենական մահմեդական հանրապետություններում Թուրքիայի ազդեցությունը գերադասում են Իրանի ազդեցությանը»:

Սա քաղաքական նուրբ հաշվարկների արդյունք էր: ԽՍՀՄ-ի փլուզման պայմաններում արտաքին ազդեցությունների ներթա-

փանցումը միութենական վերոհիշյալ հանրապետություններ անխուսափելի էր թվում: Միաժամանակ ակնհայտ էր, որ անկախ թուրքերի հետ էքոնոմշակութային կապերի բնույթից, աղբյուրներից, թուրքմենները, դազախները, ուզբեկներն ու ղըրղզները վաղուց արդեն ձևավորված ինքնուրույն ժողովուրդներ էին, ունեին ազգային սեփական ծրագրեր, ինչու չէ՛ նաև փոխհակասություններ: Այս հանգամանքը ինքնին գերադասելի էր դարձնում թուրքալեզու հանրապետություններին միավորելու իսլամի հնարավորությունները պանթուրքիզմի նկատմամբ: Ի վերջո, իսլամն առաջնորդվում էր կրոնական ընդհանրության գաղափարով: Էթնիկը հետին պլան էր մղվում, ազգային վերոհիշյալ ծրագրերը առավել ևս: Ուրեմն, նախապատվությունը տալով թուրքիային Մոսկվան ոչ թե փորձում էր ամրապնդել նրա դիրքերը Աղբյուրներում և Միջին Ասիայում, այլ թուրքական գործոնը իրանականին հակադրելու միջոցով երկընտրանքի մեջ էր գցում թուրքալեզու ժողովուրդներին, որպեսզի հնարավոր լինի նրանց պահել իր ազդեցության ոլորտում:

Շնորհիվ դրա Մոսկվան կառողջացավ այդ ժողովուրդներին մասամբ պաշտպանել արտաքին աղեցությունից: Թուրքիային խրախուսելն ակամա նպաստեց Անդրկովկասում և Միջին Ասիայում ռուս-թուրքական համագործակցության պատրանքի ստեղծմանը: Իսկ դա անկախ Մոսկվայի նկատառումներից, ընդլայնեց համաթուրքական գոտու ձևավորման թուրքերի հնարավորությունները: Կարծում ենք էրթուղրուլ Օզքյոջը «Հյուրրիյեթի» 1991թ. նոյեմբերի 23-ի համարում պատահական չէր գրում, թե «Հարավսլավիայից մինչև Հեռավոր Արևելք՝ թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքում մենք կամա-ակամա շահեր ունենք: Այս տարածքի նկատմամբ հետաքրքրությունների ցուցաբերումը չի կարելի նույնացնել պանթուրքիզմի կամ թուրանականության դրսևորումների հետ»:

Թուրքիայի դերակատարության ոլորտը նախապես ձգվում էր Անդրիատիկից Չինաստան: Անկարան իր հայեցողությամբ դա ընդլայնեց մինչև Չինական պարիսպ, ապա հասցրեց ընդհուպ Չինական ծով: Նոր դերից բխող պահանջները, ինչ խոսք, զգալի գերազանցում էին Թուրքիայի քաղաքական, տնտեսական, առավել ևս ֆինանսական կարողությունները, բայց և այնպես թուրքալեզու հանրապետությունների հետ ինտեգրացման հեռանկարը մեծ ոգևորություն պատճառեց նրան: Նոր դերի առնչությամբ պաշտոնական Անկարան ի լուր աշխարհի հայտարարեց, որ սա «քացառիկ առիթ է» և 21-րդ դարը լինելու է «թուրքական աշխարհի դար»:

Ադրիատիկից մինչև Չինական ծով ստանձնած դերը Թուրքիայի տեսանկյունից Անդրկովկասում նրա ազդեցության շնչտակի աճ էր ենթադրում: Իսկ դա իր հերթին անհրաժեշտ էր դարձնում Ադրբեջանում դիրքերի ամրապնդումը Միջին Ասիա ճանապարհի հարթելու հնարավորության ապահովման նպատակով: Նոր դերը նոր խնդիրներ էր առաջադրում: Տարածաշրջանում, որպես Ռուսաստանի ռազմաքաղաքական հենակետ, Հայաստանը թերևս առանձնահատուկ նշանակությամբ կարևորվում էր Թուրքիայի անդրկովկասյան քաղաքականության մեջ: Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը միանգամայն հակասում էր ադրբեջանցիների հետ թուրքերի եթնոմշակութային կապերի տրամաբանական զարգացմանը:

Այսպիսով, Արևմուտքի «լիազոր ներկայացուցիչ» Թուրքիան դերակատարության ճանապարհին անխուսափելիորեն բախվում էր «ռուսամետ» Հայաստանի խնդրին:

ՉԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Չայ-քուրքական հարաբերությունների սկզբնավորումը հետխորհրդային շրջանում

ԽՍՀՄ-ի փլուզումը միջազգային ասպարեզում հանգեցրեց ռազմաքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխության: Նախկին միութենական հանրապետությունները բռնեցին անկախության ուղին: Նրանք ձեռքազատվեցին արտաքին աշխարհի հետ իրենց կապը Մոսկվայի միջոցով իրականացնելու պարտականությունից: Նրանց առջև բացվեց միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու հեռանկարը: 1990թ. օգոստոսի 23-ին Չայկական ԽՍՀ գերագույն խորհուրդը անկախություն հռչակելու վճիռ կայացրեց: ԽՍՀՄ-ի փլուզման պայմաններում Չայաստանը, քուրք քաղաքական գործիչների դիպուկ արտահայտությամբ, Թուրքիայի համար ձեռք բերեց «յուրահատուկ» նշանակություն: Անկարան կանգնեց հայկական նոր քաղաքականություն մշակելու անհրաժեշտության առջև:

Առաջին հայացքից գուցե տարօրինակ թվա, բայց Չայաստանի անկախացման հավանականությունը ԽՍՀՄ-ի փլուզման շեմին լուրջ մտավախություն էր պատճառում Թուրքիայի կառավարող շրջանակներին: Ընդ որում դա մթագնում էր Ադրբեջան ներթափանցելու հեռանկարի ոգևորությունը: 1990թ. սկզբներին հայտնի թուրք հրապարակախոս Իլիան Սելչուքը «Ձումհուրիյեթ» թերթում ամենևին էլ պատահական չէր գրում, թե «եղբայրական Ադրբեջանի անկախացումը սքանչելի մի նպատակ է: Սակայն այդպիսի նպատակադրումն ինքնին ենթադրում է անկախության ճանապարհին քաջալերել նաև Չայաստանին: Վերջինիս անկախացման պարագայում Թուրքիան անխուսափելիորեն հայտնվելու է Գունաստան-Չայաստան աքցանի մեջ: Մինչդեռ այդ երկու երկրները պահանջատիրական հավակնություններ ունեն Անատոլիայի

նկատմամբ: Իսկ դա քաջ հայտնի է բոլորին»¹:

Իլիան Սելչուցի մտավախությունն այդ օրերին մասնակիորեն բաժանում էր նաև թուրքական կառավարությունը և Մեսուք Յըլմազը, որպես արտգործնախարար, թուրքական հեռուստատեսությամբ հայտարարում էր. «Աստված մի արասցե Խորհրդային Միությունը քայքայվի: Մեզ համար նախընտրելի է Թուրքիայի հարևանությամբ ունենալ զերհզոր պետություն՝ քաղաքական կայուն կարգավիճակով, քան անկախ, քայքայ անկայուն մի քանի հանրապետություններ»²: Իրադարձությունների զարգացման ընթացքը, սակայն, կանխորոշել էր ԽՄԳՄ-ի ապագան: Համայնաավարական համակարգի քայքայման պայմաններում Հայաստանի նոր դեկավարությունը, որ Մոսկվայի նկատմամբ կոշտ դիրքորոշում էր որդեգրել, սկսեց դեպի Արևմուտք կողմնորոշվելու հակումներ ցուցաբերել: Թուրքիան, որպես արևմտյան ճամբարի լիիրավ անդամ, իր վրա գրավեց նրա ուշադրությունը: Դրան հետևեց նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը, թե. «Հայաստանը քաղաքակիրթ երկրներին արժանավայել հարաբերություններ պետք է հաստատի անխտիր բոլոր հարևանների այդ թվում Թուրքիայի հետ»:

Նախագահ Թուրգուք Օզալը դրականորեն արձագանքեց Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությանը³: 1991թ. հունվարի 7-ին նա թուրքական հեռուստատեսությամբ պատասխանելով «32-րդ օր» հաղորդաշարի հեղինակ, հայտնի թուրք հրապարակախոս Մեհմեթ Ալի Բիրանդի հարցերին, ընդգծեց, որ «Թուրքիան ծրագրում է տնտեսական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ»: Այն հարցին, թե դա արդյո՞ք առաջ չի բերի թուրքալեզու հանրապետությունների հակազդեցությունը, Օզալը միանշանակ ասաց. «Ես նրանց կբացատրեմ»⁴: Թուրքիան տվյալ դեպքում տնտեսական շահերով չէր, որ առաջնորդվում էր: Միևնույն է, Հայաստանի հետ առևտուրը նրա ապրանքաշրջանառու-

թյան ընդհանուր ծավալի լուկ չնչին մասն էր կազմելու: Նա Հայաստանի հետ առևտրատնտեսական կապեր հաստատելու պատրաստակամությամբ փորձում էր շահել միջազգային հանրության համակրանքը, հասնել Մեծ եղեռնի միջազգային ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքների կասեցմանը և հայաստանյան իշխանությունների միջոցով չեզոքացնել սփյուռքահայության «հակաքուրջական» գործունեությունը:

Համենայնդեպս, թուրքութ Օզալի արձագանքը հուսադրող էր: Ի վերջո նա դրանով, անկախ Հայաստանի հետ առևտրատնտեսական կապերը թուրքիայի քաղաքական նպատակներին ծառայեցնելու Անկարայի նկրտումներից, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախադրյալներ էր ստեղծում, որը կարևոր հանգամանք էր Հայաստանի Հանրապետության համար: Վառնալով անկախ պետություն Հայաստանը զրկվել էր խորհրդային վահանից: Սինչլեռ նրա ռազմական կարողությունները խիստ սահմանափակ էին: Ազգային անվտանգության հրամայականը նման պետության համար ենթադրում էր խաղաղ ճանապարհով չեզոքացնել ռազմական հնարավոր սպառնալիքը: Այդ առումով «բարիդրացիական հարաբերությունների հաստատումը անխտիր բոլոր հարևանների հետ», որ դրվեց նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հիմքում, սկզբունքորեն ճիշտ որոշում էր: Թվում էր, թե Հայաստանի ղեկավարությունը դրանով փորձում է լուծել ոչ միայն միջազգային ասպարեզում հանրապետության դիրքերն ամրապնդելու, այլև քաղաքական եղանակով ազգային անվտանգությունը ապահովելու առաջադրանքը: ✓

Այդ փորձը, սակայն, բախվեց հայ ժողովրդի պաշտպանությունը նրա անպաշտպանվածությամբ պայմանավորելու Լևոն Տեր-Պետրոսյանի ավելի քան տարօրինակ տրամաբանությանը: Դրա հետևանքով թուրքիայի հետ փոխհարաբերությունների նշանակությունը Հայաստանում խիստ գերազանահատվեց: Սկսվեց

իշխանությունն իրենց ձեռքը կենտրոնացրած Հայոց համազգային շարժման (ՀԴԸ) ղեկավարության նախանցը դարաբաղյան հիմնահարցից: 1991թ. դեկտեմբերին հիշական ղեկավարներից Կտրիճ Սարգսյանը նախանցի անհրաժեշտությունը հայ հասարակական կրթիքին պարտադրելու մղումով ասաց. «Ե՛վ Հայաստանում, ե՛ն Ղարաբաղում պետք է հաշտվեն այն մտքի հետ, որ Ղարաբաղը մնալու է Ադրբեջանի կազմում»⁶: 1992թ. մարտի 7-ին նրան լրացնելու եկավ Աշոտ Բլեյանը, հայտարարելով. «Ղարաբաղի հարցի միակ լուծումը տեղի հայությանն Ադրբեջանի կազմում մշակութային ինքնավարություն տալն է»⁶: Ինչ վերաբերում է Հայ դատին ու պահանջատիրությանը, ապա հիշական ղեկավարությունն այս հարցում ևս նախանց կատարեց: Նույն Սարգսյանը, ընդառաջ գնալով վերջիններիս տրամադրություններին, 1991թ. մարտի 15-ին Գերագույն խորհրդում պատգամավորների առջև միանշանակ ընդգծեց. «Պահանջատիրություն ասածը դատարկ բան է այսօր: Դա ձեռնտու է բոլոր այն ուժերին, որոնք դեմ են Հայաստանի անկախությանը»⁷:

Նախանցային վերոհիշյալ տրամադրությունների ոլորտը դարաբաղյան հիմնահարցով կամ Հայ դատով ու պահանջատիրությամբ չէր սահմանափակվում: Դեռ ավելին, անկախության սկզբնական փուլում, կառավարող շրջանակների որոշ հայ գործիչներ հանդես էին գալիս «Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու և գլխավորապես դեպի Թուրքիա կողմնորոշվելու պահանջով»⁸: Իսկ նրանց պահանջը ակնհայտորեն ԱՄՆ-ի գլխավորությամբ խրախուսվում էր Արևմուտքի կողմից: Պահանջը, որ սլայալ գործիչները բացատրում էին ռազմական սպառնալիքից խուսափելու անհրաժեշտությամբ, իրականում յուրահատուկ ազդանշան էր Արևմուտքին: Ազդանշանի առումով ավելի քան յուրատեսակ էր «ազգային գաղափարախոսությունը ազգի կործանման ամենակարճ ճանապարհը» նկատե-

լու Լևոն Տեր-Պետրոսյանի հանրահայտ դիտավորությունը: Հատկապես այն դեպքում, երբ Միացյալ Նահանգները փորձում էին միջազգային քաղաքական համակարգերը միաձուլել մեկ համապարփակ (զլորայ) համակարգի մեջ, նույն կերպ վարվել տնտեսական համակարգերի պարագայում, որպեսզի հնարավոր լինի գերիշխող քննից միանձնյա կառավարել աշխարհը: Այլ կերպ ասած ԱՄՆ-ի փորձը նոր աշխարհակարգի կառուցման փորձն էր: Իսկ ազգային գաղափարախոսությունը, որպես տնտեսական և քաղաքական համակարգերի միաձուլման խոչընդոտ, ակամա խոչընդոտում է նոր աշխարհակարգի կառուցման փորձերին:

Թեև Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու և գլխավորապես դեպի Թուրքիա կողմնորոշվելու որոշ հայ գործիչների միտումները զարգացում չստացան, սակայն, հայկական իշխանությունները, տեղի տալով Արևմուտքի, առավել ևս ԱՄՆ-ի տրամադրություններին, նպաստեցին հայ-թուրքական միջպետական կապերի նշանակության գերազնահատմանը:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե անկախության վերաբերյալ: Դրան հետևեց անկախության հռչակումը Գերագույն խորհրդի կողմից: Նույն թվականի դեկտեմբերի 16-ի որոշումով թուրքական կառավարությունը ճանաչեց խորհրդային հանրապետությունների անկախությունը, այդ թվում և Հայաստանի: Դեկտեմբերի 24-ին վարչապետ Սուլեյման Դեմիրելը ուղերձով դիմեց ԳԳ ճախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին՝ առաջադիմության և բարգավաճ ապագայի մաղթանքներով Թուրքիայի ողջույնները հաղորդելով սահմանակից Հայաստանի Հանրապետությանը²: Անկախության ճանաչումը, սակայն, Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատում չէր նշանակում: Դրա համար պաշտոնական Անկարան հայկական իշխանություններին հետևյալ բովանդակությամբ ճախապայմաններ ներկայացրեց. չհիշատակել 1915թ. հայոց ցեղասպանություն-

նը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերկայությունն ու տարածքային ամբողջականությունը¹⁰։ Միաժամանակ պահանջվեց երաշխիքներով հավաստիացում, որ Հայաստանը զերծ կմնա թուրքիայի շահերին հակասող գործողություններից և ամեն կերպ կչեզոքացնի հայկական լորքիի «հակաբուրջական» գործունեությունը սփյուռքում¹¹։ «Սրանք այն նախապայմաններն են, - գրում էր «Գյուրթիյեթի» քաղաքական մեկնաբան Սեդաթ Էրզինը -, որոնց պարտադրումը եթե ոչ այսօր, ապա վաղը քուրդովին անհնար է լինելու։ Թուրքիան Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու կարիք չունի։ Ընդհակառակը, այդպիսի խնդիր ունեն հենց հայերը։ Ընդ որում, Թուրքիայի աջակցությունը Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն է»¹²։

Հայաստանի ղեկավարությունը մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմաններն ու պահանջները։ Թեպետև պաշտոնական Անկարան ցուցադրաբար հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, բայց և այնպես, հավանություն տալով Alarko Holding բաժնետիրական ընկերությունների միավորման տնօրեն Իցիակ Ալաթոնի հայտնի ծրագրին, Տրապիզոնի նալախանգիստը Հայաստանի Հանրապետության տրամադրության տակ դնելու պատրաստակամություն հայտնեց։ Ավելին, հենց Թուրքիայի նախաձեռնությամբ բարձրացվեց Սևծովյան տնտեսական համագործակցությանը Հայաստանի անդամակցության հարցը։

Ալաթոնյան ծրագրի իրագործումը ենթադրում էր միջինասիական հանրապետությունների Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի հումքը, այդ թվում քնական գազն ու նավթը Հայաստանի վրայով փոխադրել Տրապիզոն, իսկ այդտեղից կազմակերպել դրա դուրսբերումը Արև-

մուտքի շուկաներ¹³: Այլ կերպ ասած, Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի համար դառնում էր ազատ առևտրի հատուկ գոտի, որի շնորհիվ նա ոչ միայն շրջափակումն էր ճեղքում, այլև վեր էր ածվում միջազգային տարանցիկ կետի Միջին Ասիա-Արևմուտք առևտրատնտեսական կապերում: Ծրագրով նախատեսվում էր նաև անհապաղ բացել Մարգարա-Ալիջան սահմանային կետը և ձեռնամուխ լինել էրզրում-Տրապիզոն երկաթգծի կառուցմանը, որպեսզի հնարավոր լինի ապահովել Գյումրիի երկաթուղային հաղորդակցությունը Տրապիզոնի նավահանգստի հետ¹⁴: Ինքնաբերաբար օրակարգ էր մտնում նաև Ախուրյանի սահմանակետի բացումը:

Ծրագրում առանձնակի տեղ էին հատկացվում Հայաստանում աղետի գոտու վերականգնման, բնակելի շենքերի կառուցման, տեխնիկապես հնացած արդյունաբերական ձեռնարկությունների արդիականացման, դրանց արտադրական կարողությունների հզորացման ու նոր գործարաններ հիմնադրելու աշխատանքներին¹⁵:

Իցհակ Ալաթոնի վկայությամբ ծրագիրը մշակվել էր Alarko Holding-ի ու ավստրիացի Մարկ Կլարինի «Ռոշ» ֆիրմայի ջանքերով: Դրա ֆինանսավորումն ու կենսագործումը, Ալաթոնի ընկերության հետ միասին, ստանձնում էր ԱՄՆ-ում Հայկական Համագումարի նախագահ Գրայր Գովնանյանի «Գովսոն քամփընի» ընկերությունը: Այդ առումով պատահական չէր «Գովսոն-Ալարկո» բաժնետիրական համատեղ ընկերության ստեղծումը¹⁶:


Ծրագրի շուրջ թուրքական իշխանությունների հետ բանակցություններում հայկական կողմին ներկայացնում էր «Մուֆնտերստրոյի» արտոնտնօրինման պետ Վարդգես Արծրունին: Նոյեմբերի 11-ին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին ուղղված նամակում ԳԳ վարչապետի պաշտոնակատար Գրանտ Բագրատյանը նրան անվանում է Հայաստանի Հանրապետության ներ-

կայացուցիչ:

Բանակցությունների մեջ էին ներգրավված նաև ՍՍՆ-ում թուրքական ներկայացուցչությունները, որոնց հետ շփումներն իրականացնում էր Հայկական Համագումարի տնօրեն Վան Գրիգորյանը: Ինչ վերաբերում է Սարկ Կլաքինին, ապա նրա միջնորդությամբ էր ապահովվում անմիջական կապը հայկական և թուրքական կողմերի միջև¹⁷:

Ալաթոնյան ծրագիրը, ինչ խոսք, Հայաստանի առջև լայն հեռանկարներ էր բացում: Հարկ է, սակայն, նշել, որ դա բացի հեռանկարներից, նաև բազում հարցեր էր պարունակում: Առ այսօր պարզաբանված չէ ծրագրին ախտորոշացի ֆինանսիստ Սարկ Կլաքինի մասնակցության շարժառիթը: Ինչ վերաբերում է «Հովսեփ սեմալընիին», ապա այն, անկախ տնօրեն Գրայր Հովնանյանի ազգային պատկանելությունից, ամերիկյան ընկերություն էր: Հատկանշական է, որ ամերիկյան «Հովսեփ» թուրքական «Ալարկոյի» հետ թուրք-ամերիկյան բաժնետիրական ընկերություն ստեղծելիս, ելակետ էր ընդունում Հայաստանի կառավարության համձնարարությունը: Բավականին ուշագրավ էր նաև այն, որ «Հովսեփ-Ալարկո» ընկերության հիմնադրման մասին համաձայնագիրը ստորագրվում էր Մոսկվայում:

Համենայնդեպս, թուրքիան մասնակիորեն ապահովելով ալաթոնյան ծրագրի ընթացքը, վարչապետի և արտգործնախարարի մակարդակով սկսեց հանդես գալ դարաբաղյան հիմնահարցում միջնորդի դեր ստանձնելու պատրաստակամության մասին հայտարարություններով: 1992թ. հունվարին նա միջնորդության հարցը վերջնականորեն համաձայնեցրեց Բաքվի իշխանությունների հետ¹⁸: Թուրքիայի վերոհիշյալ պատրաստակամությունն ու դրան առնչվող հայտարարությունները հայ-թուրքական հարաբերությունները տնտեսական ոլորտից քաղաքական ոլորտ փոխադրելու հայտ էին: Բանի որ Ալաթոնյան ծրագիրը նախատե-



սում էր միջինասիական հանրապետությունների հումքը Հայաստան փոխադրել Ադրբեջանի տարածքով, ուստի և Թուրքիան այդ ծրագրով Հայաստանին փորձում էր ներքաշել բավականին շահավետ մի գործարքի մեջ, որպեսզի նրան Ադրբեջանի հետ բանակցություններում զսպաշապիկ հագցնի: Այդ առումով պատահական չէր Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի տրամադրության տակ դնելու պատրաստակամության զուգադիպությունը դարաբաղյան հիմնահարցում միջնորդի դեր ստանձնելու նախաձեռնության հետ:

ՉԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

*Չայ-թուրքական մերձեցման միտումներն ու
ռազմաքաղաքական իրավիճակի սրումը
Լեռնային Ղարաբաղում*

Ալաթոնյան ծրագիրը, որպես Չայաստանի շրջափակումը ճեղքելու արդյունավետ միջոց, ըստ երևույթին, բավականին հրապուրում էր հայկական իշխանություններին: Մինչ վերջիններս քար լուծյամբ շրջանցում էին դրա մութ ծալքերը, Թուրքիան թափ էր հաղորդում ղարաբաղյան հիմնահարցում իր միջնորդական ջանքերին: Վարչապետ Սուլեյման Դեմիրելը 1991թ. հունվարի առաջին օրերին, մասնակցելով հայտնի թուրք հրապարակախոս Մեհմեթ Ալի Բիրանդի «32-րդ օր» հեռուստահաղորդմանը, նշում էր. «Թուրքիան մեծապես կնպաստի հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը, միայն թե Չայաստանն ու Ադրբեջանը շարունակեն վստահել նրան»: Նրան «հակամարտության մեջ Թուրքիայի հավանական միջնորդության» մասին խոսքերով, կրկնում էր արտգործնախարար Դիքմեթ Չեթինը¹⁹:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա, հանձինս նախագահ Այազ Մուբալիբովի, քաջալերում էր Թուրքիայի միջնորդական ջանքերը և դրանց իրավական հիմք հաղորդելու մղումով ասում էր. «Ստեղծված իրավիճակում Թուրքիան պետք է ընդունի, որ Ղարաբաղի հարցը միջազգային բնույթ է կրում, և աջակցի մեզ»²⁰: Նա Ադրբեջանին Թուրքիայի աջակցության անհրաժեշտությունը հիմնավորելու համար մատնացույց էր անում «հայերի սերտ հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ»: 1991թ. փետրվարի 3-ին Անկարայում Մուբալիբովը հեռուստա-տեսությամբ դիմեց թուրքական կառավարությանը: Նա այդ դիմումի մեջ հայերի վրա ճնշում գործադրելու կոչ արեց, պատճառաբանելով. «Թուրքիան Չայաստանի համար արտաքին աշխարհ

դուրս գալու միակ պատուհանն է: Այդ իսկ պատճառով Հայաստանում թուրքիայի նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջացել: Թուրքիան այդ հետաքրքրությունը ճիշտ օգտագործելու դեպքում իր ողջ կարողությունը դրսևորելու լայն հնարավորություն կստանա»²¹:

Քանի որ Հայաստանի իշխանությունները թուրքիայի միջնորդական վերոհիշյալ ջանքերի հարցում նույնպես լուրջություն էին պահպանում, իսկ ալաթոնյան ծրագրի կենսագործման աշխատանքները ընթացքի մեջ էին, ուստի հայ-թուրքական մերձեցման տպավորություն ստեղծվեց: Իսկ դա հիմք էր տալիս ենթադրելու, թե կարգավորման հունով են ընթանում միջպետական հարաբերությունները երկու երկրների միջև: Սակայն, ԼՂՀ պաշտպանական բանակի ռազմական գործողությունները գերազանցեցին քուլոր ենթադրությունները:

1992 փետրվարին Անկարայում տեղի էին ունենում քունարկումներ Հայաստանին Սևծովյան համագործակցության մեջ ընդգրկելու շուրջ: Հայկական պատվիրակությունը ԱԳՆ փոխնախարար Արման Նավասարդյանի գլխավորությամբ առաջին պաշտոնական այցն էր կատարում Թուրքիա, մասնակցելու համար այդ քննարկումներին Ավելին, փետրվարի 13-ին Իցհակ Ալաթոնի կողմից Թուրքիա էին հրավիրվել Հայկական Համագումարի նախագահ Գրայր Գովնանյանը և այդ կազմակերպության տնօրեն Վան Գրիգորյանը: Գրավերը խիստ գործնական բնույթ էր կրում: Ալաթոնը պատրաստվում էր հյուրերին ուղեկցել Տրապիզոն, որտեղից էլ էրզրում, որպեսզի վերջիններս տեղում նախ ծանոթանան Հայաստանին տրամադրվող ազատ գոտու պայմաններին, ապա ուսումնասիրություններ անցկացնեն էրզրում-Տրապիզոն երկաթգծի շինարարության նախագծի շուրջ²²: Ուրեմն Անկարայի քաղաքական շրջանակներում լուրջ քննարկման էր ենթարկվում նաև ալաթոնյան ծրագիրը:

1992թ. փետրվարի վերջերին դարաքայան ուժերը հանկարծ գրավեցին Խոջալուն: Դա առիթ հանդիսացավ, որպեսզի Թուրքիան իսկույն հրաժարվի ալաթոնյան ծրագրից: Հայաստանի հետ մերձեցման թուրքական միտումները վերաճեցին համատարած հակահայկական հիստերիայի՝ «Հյուրրիյեթի» տվյալներով, «Ադրբեջանի հետ բարեկամության, մշակույթի և արվեստի միությունը» մարտի 1-ին Իզմիրում դատապարտեց հայերի «բռնությունները» Լեռնային Ղարաբաղում և պահանջեց անհապաղ դադարեցնել «ոճրագործությունները»: Միության նախագահ Նամըք Քեմալ Բաբեքարն ու նրա համախոհները, որպես կամավորներ ընդդեմ հայերի կռվելու պատրաստակամություն հայտնեցին²³: Մարտի 2-ին Անկարայի համալսարանը հայ ազատամարտիկների ռազմական գործողությունը Խոջալուում բնութագրեց որպես ցեղասպանության ակտ: Մեկ օր անց Կոնիայի «Անելուկյան» համալսարանի ռեկտորատը «ցեղասպան հայերի ոճրագործությունների» առթիվ ՄԱԿ-ին, Եվրահամայնքին և միջազգային հեղինակավոր այլ կազմակերպություններին դիմելու որոշում կայացրեց²⁴:

Արտգործնախարար Հիքմեթ Չեթինը, որն այդ օրերին պաշտոնական այցով Տաշքենդում էր գտնվում, Անկարայից այցն ընդհատելու և անմիջապես Բաքու մեկնելու հրահանգ ստացավ: Մարտի 4-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի Մեջլիսի Մարդու իրավունքների հանձնաժողովն ու երկրի Սահմանադրական դատարանը կոչ արեցին Մարդու Իրավունքների միջազգային կազմակերպություններին դատապարտել հայերի «ցեղասպանության» բնույթի «ոճրագործությունները»: Նույն օրը Իզմիրում ելույթ ունեցավ նախագահ Թուրգուզ Օզալն իր կառավարությունից պահանջեց հայերի «ոճրագործությունների» դեմ վճռական միջոցների դիմել²⁵: Իր հերթին «Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Մեսուք Յըլմազը, Օզալին լրացնելու ոգով, հիշեցրեց, որ «Դարաքայի կարգավիճակի հարցում Թուրքիան միջազգային

համաձայնագրերից բխող իրավունքներ ունի, առանց թուրքիայի համաձայնության չի կարող փոփոխությունների ենթարկվել այդ կարգավիճակը»: Իսկ «Բարոություն» կուսակցության նախագահ Նեջմեթին Էրթաքանը, ընդգծելով Արևմուտքի «հայամետ» դիրքորոշումը, կոչ արեց Ադրբեջանի «ոտնահարված» իրավունքների պաշտպանության հարցում դիմել իսլամական աշխարհի անկախությանը²⁶:

Հակահայկական հիստերիայի հարցում ընդդիմության շարքերում առանձնակի ակտիվություն ցուցաբերեց Չախ ժողովրդավարական կուսակցության նախագահ Բյուլենթ Էջևիրը: Նա կառավարությունից պահանջեց դադարեցնել թուրքիայի տարածքով մարդասիրական օգնության առաքումը Հայաստան, քանի դեռ հայերը վերջ չեն տվել Ղարաբաղի վրա հարձակումներին: «Ադրբեջանական կառավարության ցանկությունով, - ասաց նա, - անհրաժեշտ է, առանց պատերազմական գործողություններին մասնակցելու, ռազմական օգնություն ցույց տալ Ադրբեջանին»: Միաժամանակ Էջևիրը Նախիջևանի վրա հայերի հնարավոր հարձակման առումով նախազգուշացրեց կառավարությանը և ընդգծեց պաշտոնական հայտարարության անհրաժեշտությունը, թե «նման հարձակման դեպքում դա դիտվելու է որպես թուրքիայի վրա կատարված հարձակում»²⁷:

Ինչ վերաբերում է «Գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Ալփարսլան Թյուրքեչին, ապա նա Մեջլիսից պահանջեց «Հայաստանի ոճրագործությունը ազերի թուրքերի նկատմամբ» դատապարտելու որոշում կայացնել: Նա այդ հարցով դիմեց Մեջլիսի նախագահ Գյուլսամեթին Ջինդողուքին, պահանջեց Ղարաբաղի հակամարտությունը դիտել որպես ազգային հարց և միաժամանակ առաջարկեց Անկարայում հրավիրել թուրքալեզու հանրապետությունների խորհրդարանականների համաժողով, հակա-

մարտության առնչությամբ ընդհանուր դիրքորոշում մշակելու համար: Թյուրքեշը պահանջեց նաև «հայերի կողմից կատարվող ցեղասպանության» հարցը բարձրացնել ՄԱԿ-ում, ԵԱԳԽ-ում: Նա կոչ արեց Հայաստանը շրջափակել, նրա առջև փակել Թուրքիայի օդային տարածքը և վերջապես սառեցնել Հայաստանի անկախության ճանաչումը²⁶:

Զինդորուքը, հավաստելով Թյուրքեշին, թե Մեջլիսը համապատասխան որոշումով կդատապարտի Հայաստանին, ավելացրեց. «Հայերի բռնությունները Լեռնային Ղարաբաղում մի անգամ ևս հավաստում են, որ թուրքերին վերագրվող եղեռնն անցյալում հենց իրենք են իրագործել»²⁷ Այդ ընթացքում անուշադրության մատնվեց նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ուղերձը, որը «Դյուրրիյեթի» վկայությամբ, «Հայ-թուրքական հարաբերությունները միջպետական մակարդակի բարձրացնելու» ակնկալիքով հասցնագրված էր Թուրքիայի ղեկավարներին²⁸: Խոջալուի գրավմանը հետևեց Շուշիի ազատագրումն ու Լաչինի միջանցքի բացումը²⁹: 1993թ. ապրիլին ղարաբաղյան ուժերին հաջողվեց տիրանալ նաև Քելբաջարին: Այնուհետև նրանք շարժվեցին Ֆիզուլի: Թուրքիան կանգնեց փաստի առաջ: Խուճապն ակնհայտ էր³⁰:

Ընդ պաշտպանական բանակի հաղթական գործողությունները ոչ միայն վնասեցին Ադրբեջանում Թուրքիայի հեղինակությանը, այլև սպառնալիքի տակ դրեցին Անդրկովկասը թուրքական գործոնի միջոցով ռուսական ազդեցությունից պաշտպանելու ամերիկյան ծրագրերը: 1993թ. ապրիլի 3-ին կառավարության որոշումով Թուրքիան արգելեց իր տարածքով բոլոր տեսակի բեռնափոխադրումները Հայաստան, պատճառաբանելով, թե «Դրանք նպաստում են հայերի ռազմական ջանքերին ընդդեմ Ադրբեջանի»³¹: Հայկական ինքնաթիռների առջև փակվեց նաև H-50 օդային միջանցքը: Հայաստանը ենթարկվեց լիակատար շրջափակման: Դրան հետևեցին բացահայտ ռազմական սպառնալիքները:

Նախագահ Թուրգոս օգալը հանդես եկավ «հայերի առաջխաղացումը թուրքական ռազմական ուժերով կանգնեցնելու» հայտարարությամբ: Դեռ ավելին, նա հայտարարեց. «Ժամանակն է, որ Թուրքիան ատամներ ցույց տա Գայաստանին»²⁴: Օգալի ռազմաշունչ հայտարարությունները առիթ ծառայեցին, որպեսզի Անկարայի պաշտոնական շրջանակներում քննարկվի Գայաստանի նկատմամբ «Կիպրոսյան տարբերակի» կիրառման հարցը: Տարբերակով ենթադրվում էր հանկարծակի հարձակում և Գայաստանի արագ գրավում: Այդ ընթացքում թուրքական զորամիավորումները, որոնք Գայաստանի սահմանամերձ շրջանում դրվել էին «զզոնության վիճակի մեջ», 1993թ. ապրիլին համալրվեցին²⁵:

Գամատարած հակահայկական հիստերիայի պայմաններում խիստ ակտիվացան Թուրքիայի ազգայնամոլ շրջանակները: Երկրում թափ հաղորդվեց «Աղբեջանցի թուրքերի հետ համերաշխության միության» գործունեությանը: Ալփարսլան Թյուրքեշի Ազգայնական աշխատանքային կուսակցության կողմից հովանավորվող այս կազմակերպությունը «ազերի եղբայրներին օգնության ձեռք մեկնելու» կարգախոսով զենքի կոչեց այսպես կոչված «զզոն թուրքերին»²⁶: Կոչին առաջինը արձագանքեցին «Գորշ գայլերի» նախկին գրոհայինները, որոնց զլխավորությամբ սկսվեց զինծառայությունը հատուկ զորամասերում անցկացրած ազգայնամոլ տարրերի հավաքագրումը որպես կամավորական, առավելապես Գայաստանին սահմանակից Կարս և Իգդիր նահանգներում: Շուտով «զզոն թուրքերի» շարքերում սկսեցին հայտնվել Ալփարսլան Թյուրքեշին համակրող սպաները, «ազերի եղբայրների» մոտ որպես զինվորական խորհրդական ծառայելու պատրաստակամությամբ Թուրքական «Գերչեք» շաբաթաթերթը, անդրադառնալով այդ խնդրին, մատնանշում է, որ կամավորների հավաքագրման աշխատանքները կողորդինացնում էին թուրքական զաղտնի ծառայությունները, որոնց օրինությամբ էլ վերջիններս

անարգել թուրքական սահմանն անցնում և Նախիջևանի տարածքով ներթափանցում էին Ադրբեջան համալրելու համար ադրբեջանական ջոկատները²⁷:

1992թ. հունիսի տվյալներով Նախիջևանի և Ադրբեջանի տարածքում տեղակայված էին շուրջ 3 հազար կամավորական: Դրանց գործունեությունը, սակայն, հայերի դեմ կոիվներին մասնակցությամբ չէր սահմանափակվում: Կոիվները, ինչպես վերոհիշյալ շաբաթաթերթն է նշում, որպես միջոց ծառայում էին ադրբեջանական իրականության մեջ «Գորշ գայլերի» դիրքերի ամրապնդման առաջնահերթ խնդրին: Իսկ Ադրբեջանի ժողովրդական ճակատի իշխանությունները, Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ, ակնհայտորեն խրախուսում էին թուրք ազգայնամուների գործունեությունը:

Ինչ վերաբերում է թուրքական կառավարությանը, ապա միջպետական բազմաբնույթ կապերն ու դիվանագիտական բարդ խաղերը «ազերի եղբայրներին օգնության ձեռք մեկնելու» հարցում կաշկանդում էին նրան: Շրջահայացության հրամայականը խիստ սահմանափակում էր նրա գործունեության ասպարեզը և այդ առումով «զգոն թուրքերի» հնարավորություններն անհամեմատ զերադասելի էին դառնում: Այս պայմաններում օգնության նախաձեռնությունն ինքնաբերաբար անցնում էր ազգայնամուլ շրջանակներին, որոնց ներկայացուցիչներն էլ հանդես էին գալիս կառավարության հանձնակատարի դերում:)

«Գերչեք» շաբաթաթերթի վկայությամբ թուրքական իշխանությունները կուսակցական գործիչ Ալիարսլան Թյուրքեչին օժտել էին հատուկ լիազորություններով, որպեսզի նա պետական գործերով փակ գաղտնի բանակցություններ վարի իշխանության բարձրագույն ներկայացուցիչների հետ թուրքալեզու հանրապետություններում: Նրա կողքին հաճախակի Նախիջևան և Ադրբեջան էին գործուղվում «Ադրբեջանցի թուրքերի հետ համերաշխու-

թյան միության» նախագահ Ջեմ Դադթեքինն ու ղեկավար կազմի այլ անդամներ, ինչպես նաև «Ադրբեջանցի թուրքերի փրկության միավորման» համանման գործիչները: Փաստորեն վերոհիշյալ միությունն ու միավորումը համատեղ ջանքերով լրացնում էին թուրքական կառավարության շրջահայացության հրամայականից բխող ճնշվածքը, որ առաջացել էր «ազերի եղբայրներին օգնության ձեռք մեկնելու» հարցում: Այդ երկու կազմակերպությունները Թյուրքեշի Ազգայնական աշխատանքային կուսակցության ծնունդ էին: Ուստի չափազանցություն չի լինի ասել, որ թուրքական կառավարությունն Ադրբեջանում թյուրքեշականներով էր ներկայանում:

Ադրբեջանի ռազմական կարքերը պաշտոնապես հոգալը կառավարության տեսանկյունից նշանակում էր մարտահրավեր նետել միջազգային ուժերին՝ ստեղծելով նրանց համար հակազդեցության անհրաժեշտ նախադրյալներ: Դա իր հերթին ենթադրում էր վտանգել Թուրքիայի ազգային շահերը: Այս պայմաններում կառավարությունը այլ ելք չգտավ, քան ռազմական օգնությանը տալ մարդասիրականի ձևակերպում: Մինչև 1992թ. հունիսը, ղեղորայքի և պարենամթերքների քողի տակ, ադրբեջանցիներին տրամադրվել էր 5 հազար «Ստինգեր» տիպի հրթիռ, հրթիռային կայանք, ականներ և ականանետեր, այդ թվում հակատանկային: Ըստ «Գերչեք» շաբաթաթերթի, կառավարությունը հոգ էր տանում, որպեսզի թուրքական արտադրության զենք և զինամթերք հանկարծ չհայտնվի Ադրբեջանի տարածքում: Թերևս, այդ առումով պատահական չէ ադրբեջանցի եղբայրներին «կալաշնիկով» ավտոմատների մատակարարումը, որ կատարվում էր Բուրդիստանի աշխատավորական կուսակցության PKK-ի գրոհայինների հետ մարտերում ձեռք բերած զենքերի հաշվին²⁶:

1993թ. հունիսին Ադրբեջանն ականատես եղավ իշխանության հերթափոխի: Հանրապետության նախագահի պաշտոնում

Աբուլֆազ Էլչիբեյին փոխարինեց Գեյդար Ալիևը) Գայ-ադրբեջանական հակամարտության գոտում իրերի դրությունը փոխելու վերջինիս ջանքերը ապարդյուն անցան, քանի որ 1993թ. հուլիսին ԼՂՀ պաշտպանական քանակին հաջողվեց գրավել Ադղամը: Բայց և այնպես, Ալիևի իշխանության գլուխ գալուց հետո Ադրբեջանն անդամակցեց ԱՊԳ-ին: Դրանով ստեղծվեցին Բաքու-Մոսկվա փոխհարաբերություններում տիրող լարվածության հետագա բուլացման անհրաժեշտ նախադրյալները: Միաժամանակ խիստ սահմանափակվեցին «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության Ազգայնական աշխատանքային կուսակցության գործունեության հնարավորությունները Ադրբեջանում: Ալիարսլան Թյուրքեշը գրկվեց ադրբեջանական նորընտիր իշխանությունների աջակցությունից, որ նա վայելում էր մինչև Էլչիբեյի պաշտոնազրկումը: Ստեղծված իրավիճակի թելադրանքով թուրքական կառավարությունը ստիպված վերանայեց իր դիրքորոշումը Ադրբեջանին ռազմական օգնություն տրամադրելու հարցում: Նպատակահարմար գտնվեց օգնությանը հաղորդել պաշտոնական բնույթ:

«Չյուրրիյեթ» օրաթերթը 1993թ. դեկտեմբերի 23-ի համարում տեղեկացնում է, որ օգնության բնույթի փոփոխության հետ փոխվեց նաև դրա տրամադրման սկզբունքը: Ադրբեջանում իշխանության հերթափոխի հետ թուրքական կառավարությունը դադարեցրեց «ազերի եղբայրներին» նվիրատվության կարգով սպառազինությունների մատակարարումը: Փոխարենը որոշվեց Ադրբեջանին տրամադրել համապատասխան վարկեր: Դրանց ընդհանուր ծավալը կազմում էր 30 միլիոն ամերիկյան դոլար: Սակայն վարկերից օգտվելու համար ադրբեջանական իշխանություններին առաջադրվում էին հետևյալ նախապայմանները. բացառել թուրքական ռազմական օգնության փոշիացումը և ապահովել թուրք զինվորական խորհրդականների գործուն մասնակցությունը Ադրբե-

ջանում ազգային բանակի կազմավորման աշխատանքներին»³⁹։

Ըստ «Դյուրրիյեթի», նախապայմանների առաջադրումը ադրբեջանական իշխանություններին բացատրվում էր թուրքական ռազմական օգնության նկատմամբ վերջիններիս անպատասխանատու վերաբերմունքով: Վերոհիշյալ օրաթերթի տվյալներով, Ադրբեջանում եթե նախորդ իշխանություններն աչքաթող էին անում Թուրքիայից առաքվող զենքն ու զինամթերքը, որի հետևանքով այդ ամենը զորամասերում փոշիանում էր, ապա նորընտիր իշխանությունները պարզապես անտեսում էին թուրքական պետության միջոցներով Ադրբեջան գործուղված ավելի քան 150 թուրք զինվորական խորհրդականներին և անգործության էին մատնում նրանց⁴⁰:

Ադրբեջանում զենքի ու զինամթերքի փոշիացման փաստերը Թուրքիայի տեսանկյունից անընդունելի էին: Բայց, ավելի քան անընդունելի էր թուրք խորհրդականների անտեսումը, երբ այդ նույն իշխանությունների կողմից հետևողականորեն խրախուսվում էր Ռուսաստանից, Աֆղանստանից և այլ երկրներից հրավիրված խորհրդականների գործունեությունը: «Դյուրրիյեթը» նշում է, որ թուրքական կառավարությունը իր տրամադրության տակ ուներ ռազմական օգնության չարաշահումների վերաբերյալ հավաստի փաստեր և նախապայմաններ առաջադրելու միջոցով զգուշացնում էր Բաքվին, թե այլևս չի կարող հանդուրժել դրանց կրկնությունը⁴¹:

Ադրբեջանական նորընտիր իշխանությունները ընդունեցին Թուրքիայի նախապայմանները: Վերսկսեց թուրքական ռազմական օգնության ներհոսքը Ադրբեջան: Սակայն, «ազերի եղբայրներին» օգնության ձեռք մեկնելու թուրքական կառավարության ջանքերը քախվեցին ռուսական գործոնին և կասկածի տակ դրվեց դրանց արդյունավետությունը: Ի չիք դարձան ռազմական հավասարակշռությունը հայ-ադրբեջանական հակամարտության գո-

տում թուրքիայի աջակցությամբ փոխելու աղբբեջանցիների ակնկալիքները: Ի վերջո Անդրկովկասում ռուսական ազդեցությունը զգալի էր և այստեղ միանգամայն համընկնում էին Հայաստանի և Ռուսաստանի ռազմավարական շահերը: Այդ առումով պատահական չէր համատեղ պաշտպանության վերաբերյալ մի շարք պայմանագրերի կնքումը երկու երկրների միջև: Եթե Հայաստանն այդ պայմանագրերով հուսալի հիմքերի վրա էր դնում իր ազգային անվտանգությունը և ձեռք էր բերում թուրքիայի ռազմական սպառնալիքը չեզոքացնելու հնարավորություն, ապա Ռուսաստանը ռազմաքաղաքական հենակետ էր ձեռք բերում Անդրկովկասում:

Գնականտի ձեռքբերումը կարևոր հանգամանք էր Ռուսաստանի համար: Ի վերջո Ռուսաստանը ձգտում է, որ Անդրկովկասը կամրջի դեր կատարի և ոչ թե իրեն տարանջատի Միջին Արևելքից: Իսկ տարանջատման միտումները, ինչպես այդ մասին վկայում է թուրք լրագրող Հադի Ուլունգինը, առկա էին, ընդ որում ոչ միայն թուրքիայի, այլև Արևմուտքում նրա դաշնակիցների քաղաքական շրջանակներում: Անդրկովկասյան համագործակցությունը, որ նախատեսվում էր ստեղծել Հայաստանի, Վրաստանի ու Աղբբեջանի մասնակցությամբ, թերևս այդ միտումների ցայտուն դրսևորումն էր⁴²:

ԼՂԳ պաշտպանական քանակի ռազմական գործողությունները, այնուհանդերձ, չխանգարեցին, որպեսզի Հայաստանը 1992թ. հունիսի 25-ին թուրքիայի կողմից իբրև հիմնադիր անդամ հրավիրվի մասնակցելու Սևծովյան տնտեսական համագործակցությանը: Ամենայն հավանականությամբ դա արվեց Հայաստանը թուրքիայի քաղաքական ուղեծրում պահելու միտումով: Քանի որ թուրքիան Արևմուտքի շահերն է արտահայտում, ուրեմն Հայաստանը թուրքական միջանցքով ուղղակիորեն ներքաշվում էր Արևմուտքի ազդեցության ոլորտ: Այլ կերպ

ասած, նրա կապը Արևմուտքի հետ միջնորդավորվում էր Թուրքիայով:)

Անհրաժեշտ է նշել, որ թուրքական միջանցքը բացված էր ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի ու Միջին Ասիայի բոլոր հանրապետությունների համար: Միջանցքի գործունեության ապահովումը ենթադրում էր Թուրքիայի դիրքերի ամրապնդում Ադրբեջանում, որպեսզի վերջինս ցատկահարթակի դեր կատարի Միջին Ասիա ներթափանցելու համար: Օդային կամուրջը, երբ բացակայում են ցամաքային հաղորդակցության ուղիները, Թուրքիային այդ հնարավորությունը չէր տալիս: Ահա թե ինչու Նախիջևանի վրայով Թուրքիայի ու Ադրբեջանի միջև անմիջական ցամաքային կապի հաստատումը դարձավ առաջնահերթ խնդիր: Այսպիսով առաջ քաշվեց Պոլ Գորլի տխրահռչակ ծրագիրը:

Ծրագրով ենթադրվում էր Լեռնային Ղարաբաղի մի մասը միացնել Հայաստանին, իսկ մյուսը՝ հանձնել Ադրբեջանին: Ինչ վերաբերում է Չանգեզուրին, ապա դա որպես կամուրջ Նախիջևանի ու Ադրբեջանի միջև, վերջինին էր կցվում: Այդ ընթացքում Հայաստանը զրկվում էր Իրանի հետ ընդհանուր սահմանից, նա կանգնում էր լիակատար մեկուսացման առջև: Իսկ Ռուսաստանը վերջնականապես տարանջատվում է Միջին Արևելքից՝ կորցնելով ցամաքային հաղորդակցության հնարավորությունները⁴²: Ի դեպ, Պոլ Գորլի ծրագիրը, որի հիմքում ընկած է տարածքափոխանակման գաղափարը, նոր երևույթ չէր:

1993թ. օգոստոսին Վաշինգտոնը հանդես եկավ Գորլի ծրագրի կատարելագործված տարբերակով⁴³: Դա հայ և ադրբեջանցի ժողովուրդների մասնատված հատվածներին միավորելու, դարաբաղյան հակամարտությանը մնայուն լուծում առաջադրելու քրդի տակ Թուրքիայի անմիջական ցամաքային կապը Ադրբեջանի հետ ապահովելու հերթական փորձ էր: «Դյուրրիյեթի» քաղաքական մեկնաբան Հադի Ուլուենգինի խոսքերով ծրագրի կատարե-

լագործված նոր տարբերակը ոչ միայն համապատասխանում էր թուրքիայի ռազմավարական շահերին, այլև պարարտ հող էր ստեղծում Բաքու-Երևան-Թբիլիսի հետագա համագործակցության համար, հանուն միասնական Անդրկովկասի:

Ահա թե ինչու թուրք մեկնաբանը, զոհաբերելու գնով «ազերի եղբայրների շահերը» Լեռնային Ղարաբաղում, համառոտն պնդում էր, թե հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման լավագույն տարբերակը Ղարաբաղի դիմաց Նախիջևանի վրայով Թուրքիա-Ադրբեջան միջանցքի քաջումն է⁶⁶: Երբ թուրքական թերթերը ոգևորված գրում էին, թե ծրագրի իրագործման դեպքում կասպյան նավթի փոխադրումը Թուրքիա կատարվելու է զուտ ադրբեջանական տարածքով⁶⁷, ԼՂՀ պաշտպանական բանակը հանկարծ վերահսկողություն հաստատեց մինչև Հորադիզ ընկած հատվածի վրա: Նրա հաղթական գործողություններով ամրապնդվեց Ձանգեզուրի գոտին:

Դա, ըստ երևույթին, լրջորեն անհանգստացրեց Արեմուտքին: Արևմտյան, առավել ևս ամերիկյան մամուլի էջերը սկսեցին լցվել ընդգծված հակահայկական հոդվածներով: «Աստիճաբար փրես» գործակալության թղթակից Լայեմ Մաքրդուելլին «Հայաստանը կրկին հզորանում է» խորագրով հոդվածում փորձեց տազնապահար նախազգուշացնել թուրքերին, թե. «Այս տարվա ռազմական հաջբանակներով ոգևորված շատ հայեր սկսել են երազել Մեծ Հայքը եվրոպայից մինչև Ասիա տարածվող կայսրությունը վերականգնելու մասին»⁶⁸:

Արևմուտքի անհանգստությունը պայմանավորված էր Գորլի ծրագրի ճակատագրով: Ձանգեզուրի գոտու ամրապնդմամբ ծրագիրը փաստորեն տապալվեց, դրա կատարելագործված տարբերակը նույնպես: Չախտղման եզրին կանգնեցին Անդրկովկասում ամուր պատենչ ստեղծելու և դրանով Ռուսաստանի ազդեցության վերականգնման հնարավորությունները, այնպիսի ավանդական

չրջաններում, ինչպիսիք են Մերձավոր և Միջին Արևելքը՝ սահմանափակելու Վաշինգտոնի մտափոխումները: Նման իրավիճակում միանգամայն տրամաբանական էր, որ «Աղդրեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանելու» պարտավորություն ստանձնած ԱՆԿարան սառն անտարբերությամբ վերաբերվեր Թուրքիայի և Չայաստանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հայկական իշխանությունների առաջարկներին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հայաստանի հետ մերձեցման թուրքական միտումների էությունը

Հետադարձ հայացք գցելով հայ-թուրքական հարաբերություններին հարկ է նշել, որ դրանց ընթացքն ամենևին հարթ չի եղել: Հայաստանի ու Թուրքիայի միջև մերթ ի հայտ են եկել մերձեցման միտումներ, մերթ փոխհարաբերությունները լարված բնույթ են ստացել: Որպես կանոն, մերձեցման որոշակի փուլում ռազմաքաղաքական իրավիճակը հայ-ադրբեջանական հակամարտության գոտում կտրուկ սրվել է, բնականաբար ի չիք դարձնելով մերձեցման միտումները: Թուրքիայի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ կախված է եղել դարաբաղյան հիմնահարցի ընթացքից և, դա, որպես լարվածության աղբյուր, բացասական ներգործություն է ունեցել երկու երկրների փոխհարաբերությունների վրա: Ինչ վերաբերում է Ադրբեջանի այսպես կոչված իրավունքները Լեռնային Ղարաբաղում պաշտպանելու Թուրքիայի փորձերին, ապա դրանք առաջ են բերել Ռուսաստանի ուժեղ հակազդեցությունը և ձախողման մատնվել:

1994թ. մայիսի 12-ին Մոսկվայի միջնորդությամբ ղարաբաղյան հիմնահարցում հակամարտող կողմերի միջև հրադադար ստորագրվեց: Հատկանշական է, որ ԼՂՀ պաշտպանության բանակի հարթական գործողությունները եթե հանգեցրին Ադրբեջանում Թուրքիայի դիրքերի թուլացմանը, ապա հրադադարը նպաստեց, որպեսզի ղարաբաղյան հիմնահարցի նախաձեռնությունն անցնի Ռուսաստանին: Դրանով, փաստորեն, կասկածի տակ դրվեց Անդրկովկասում Մոսկվայի ազդեցությանը հակակշռելու և հայ-ադրբեջանական հակամարտությունում որոշիչ դեր խաղալու թուրքական գործոնի հնարավորությունները: Եռտող ռուս-թուրքական հակասությունները ղարաբաղյան հարթությունից փո-

խաղրվեցին կասպյան նավթի հարթություն: Մակայն Անկարան նաև նավթի խնդրում էր ստիպված Մոսկվային գիջել նախաձեռնությունը:

Այս պայմաններում ռուս-թուրքական հակասությունների հիմքում սկսեց հետզհետե տեղ զբաղեցնել եվրոպայում սովորական սպառազինությունների կրճատման պայմանագիրը: Թուրքիան փորձեց կանխել դրա վերանայումը Ռուսաստանի կողմից: Ի պատասխան դրան ռուսները դիմեցին քրդական հարցի որպես ազդեցության լծակ օգտագործման քայլին: Դրա վառ ապացույցը քրդական վտարանդի խորհրդարանի Հաագայից Մոսկվա փոխադրումն ու 1995թ. հոկտեմբերի 30-ին Պետդումայի շենքում դրա 3-րդ նստաշրջանի գումարումն էր²⁶: Ռուս-թուրքական հակասությունների փոխադրումը մեկ հարթությունից մյուսն ու ազդեցության լծակների փոխադարձաբար օգտագործումը սրեց երկու երկրների միջև ծավալվող պայքարը: Հենց այդ պայքարում էլ կարևորվեց Հայաստանի տեղն ու դերը ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի քաղաքական ծրագրերում:

Վերոհիշյալ խնդիրների նախաձեռնությունը Մոսկվային գիջելու պարագան, ինչը լուրջ խոչընդոտ էր Անդրկովկասում Թուրքիայի քաղաքական ակտիվության ճանապարհին, Անկարային ստիպեց բարելավման միտումներ հանդես բերել Հայաստանի հետ փոխհարաբերություններում, հանգեցնելով հայ-թուրքական հարաբերությունների որոշ աշխուժացմանը թուրք լրագրողների այցեր Հայաստան, Հայաստանի առջև Թուրքիայի օդային տարածքի բացում, Ստամբուլում Էսենյուրթի շրջանի քաղաքազուխ Գյուրբուզ Չափանի պատվիրակության այց երևան, վերջինիս կողմից հարգանքի մատուցում Ծիծեռնակաբերդում եղեռնի զոհերի հիշատակին և այլն:

Մեծածցման թուրքական միտումները նպատակաուղղված են «հայ դիվանագետների հետ շինիչ երկխոսության» պահպանմա-

նը: Իսկ ԱՄՆ-ը երկխոսության հարցում անվերապահորեն աջակցում է Թուրքիային, որպեսզի հնարավոր լինի ապահովել Չայաստանի արտաքին աշխարհ դուրսբերումը թուրքական միջանցքով, պարտադրել նրան Թուրքիայով միջնորդավորված արևմտյան կողմնորոշում և հասնել Ռուսաստանի նկատմամբ պաշտոնական երևանի դիրքորոշման վերանայմանը:

Չայ-թուրքական հարաբերությունները վաղուց են դուրս եկել երկու երկրների շրջանակներից և ընդգրկվել են Անդրկովկասում քաղաքական ազդեցության համար Ռուսաստանի Դաշնության ու Միացյալ Նահանգների միջև ծավալվող մրցապայքարի ոլորտ: Պատահական չէր Սուլեյման Դեմիրելի արտահայտությունը, թե «Չայաստանն ինքնին մեծ խնդիր չէ, քայքայ մեծ քաղաքականության խնդիր է»: Այս հանգամանքը խիստ բարդացնում է «քոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու» հայկական իշխանությունների առաջադրանքը և հավելյալ խոչընդոտներ է հարուցում դարաքաղյան հիմնահարցի հանգուցալուծման ճանապարհին:

Չպետք է, սակայն, անտեսել Անդրկովկասում Չայաստանին վերապահվող կարևոր դերը: Նախկին միութենական հանրապետություններում Ռուսաստանի ազդեցության վերականգնման ընձեռած հնարավորությունները ճիշտ օգտագործելու և այդ դերը առանցքայինի վերածելու դեպքում թվում է, թե Անդրկովկասի քաղաքական ճակատագիրը մեծապես կախված է լինելու Չայաստանի կողմնորոշումից: Իսկ դա իր հերթին պայմանավորված է դարաքաղյան հիմնահարցի հանգուցալուծման նախածեռնությունների պատկանելությունից: Ահա թե ինչու եւրֆու Սինսկի խմբի ձեռնարկումներն անընդհատ քախվում են Մոսկվայի դիմակայությանը, և Լեոնային Դարաքաղի շուրջ ուրվագծվում է Ռուսաստան-ԱՄՆ մրցապայքարը:

Ռուսաստանը 1993 թվականից ի վեր որոշակիորեն կոշտաց-

բարելավելու պատրաստակամություն էր հայտնում, Ադրբեջանն անմիջապես առարկում և հակադրվում էր նրան: Իսկ քարելավման պատրաստակամությունից հրաժարվելու դեպքում նա իրեն էր հակադրում ԱՄՆ-ին: Անկարան այդ պայմաններում առարկումները համադրեց ճնշումների հետ, որպեսզի խուսանալի Ադրբեջանի ու ԱՄՆ-ի միջև: Քանի որ նրա հաշվարկներում նպատակը ոչ թե Չայաստանի հետ փոխհարաբերությունների բարելավումն էր, այլ բարելավման պատրաստակամության ծառայեցումը թուրքիայի շահերին, ուստի նա, խուսափելով միջպետական բնույթ հաղորդել այդ փոխհարաբերություններին, ամեն կերպ ջանում էր պահպանել երկկողմ շփումները: Այլ կերպ ասած, թուրքիայի հայկական քաղաքականությունը կառուցվում էր «երկկողմ շփումները դիվանագիտական հարաբերությունների բացակայությամբ չաղունակելու» սկզբունքի վրա: Դեռ 1993թ. հունվարին Սուլեյման Դեմիրելը՝ երբ զբաղեցնում էր վարչապետի պաշտոնը, կարևորելով հայ-թուրքական շփումների նշանակությունը թուրքիայի ազգային շահերի տեսանկյունից, մատնանշեց. «Պարտավոր ենք Չայաստանի հետ գտնվել այնպիսի հեռավորության վրա, որ չսպառնանք երկխոսության հնարավորությունները: Սա մեծ քաղաքականություն է: Թշնամության հիմքի վրա պետական քաղաքականություն չեն կառուցում»⁶⁰:

Ինչ վերաբերում է «Ադրբեջանի գրավյալ տարածքներից հայկական զորքերի լիակատար դուրսբերմանը», որ թուրքիան Չայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների անհրաժեշտ նախապայման է համարում, ապա դա չի կարելի բացատրել Բաքվի քմահաճույքին հազուրդ տալու Անկարայի մղումով: Չպետք է մոռանալ, որ Անդրկովկասը, ինչպես այդ մասին բազմիցս վկայել է Սուլեյման Դեմիրելը, յուրատեսակ կամուրջ է թուրքիայի և Միջին Ասիայի միջև: Չայ-ադրբեջանական հակամարտությունը խոչընդոտելով այդ կամուրջի կենսագործունեությունը,

ըստ Դեմիրելի, միաժամանակ խոչընդոտում է թուրքական պետության ներթափանցումը միջինասիական հարապետություններ: Այս հարցում Դեմիրելին է լրացրել փոխվարչապետ Բյուլենթ Էջլիթը և, որպես ներթափանցման միջոց, մշտապես կարևորել Ձանգեզուրի բռնակցմամբ Լախիջևանի վրայով Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ցամաքային կապ հաստատելու անհրաժեշտությունը:

Հատկանշական է, որ դեռ 1995թ. փետրվարին, երբ փոխպետքարտուղար Ռիչարդ Դուլբրուքը Անկարայում Հայաստանի հետ փոխհարաբերությունների բարելավման կոչով դիմեց թուրքական իշխանություններին, Բաքուն անմիջապես արձագանքեց դրան: Փետրվարի 27-ին նախագահ Ալիևի խորհրդական Վաֆա Գուլիզադեն միանշանակ հայտարարեց. «Քանի դեռ հայերը դուրս չեն եկել Ադրբեջանի գրավյալ տարածքներից, Երևանի հետ հարաբերությունների կարգավորումը Թուրքիայի կողմից դավաճանություն է ադրբեջանցիների նկատմամբ»³¹: Անկարան, սակայն, տեղի չտվեց: Ընդհակառակը, նա զայրույթով պատասխանեց Բաքվի արձագանքին, ընդգծելով. «Թուրքիան արտաքին քաղաքականության մեջ այլ պետության քմահաճույքով չի առաջնորդվում»³²:

Հայկական իշխանությունները, ելնելով, ըստ երևույթին, նախորդ միտումների փորձերից, «երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու» առաջարկի փոխարեն Թուրքիային սկսեցին դիմել սահմանային դուռ բացելու առաջարկով: 1997թ. մայիսի սկզբներին Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության կազմում ստեղծվեց հայթուրքական գործարար համագործակցության հանձնաժողով: Նրան միացան Հայ-թուրք և Թուրք-հայ առևտրի կոմիտեները: Մինչ այդ կոմիտեները ջանքեր էին գործադրում, որպեսզի Թուրքիայի կառավարող շրջանակները սահմանային դուռ բացեն Հայաստա-

նի համար, նախագահ Սուլեյման Դեմիրելը նույն թվի հոկտեմբերի 30-ին Կարսում հայտարարեց. «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանային դռան բացումը քաղաքական խնդիր է: Մի քանի գրոշանոց առևտրի համար մենք ադրբեջանցիներին դժվար կացության մեջ չենք զցելու»²²: Նա դրանով սահմանային դռան բացումը նույնպես պայմանավորեց «Ադրբեջանի գրավյալ տարածքներից հայկական զորքերի լիակատար դուրսերման» հետ: Այսպիսով, դիվանագիտական հարաբերությունների հաստատման ակնկալիքների հետ հոդս ցնդեցին նաև սահմանային դռան բացման հայկական կողմի ակնկալիքները: Մինչդեռ դրա բացումը ենթադրում էր սահմանային առևտրի զարգացում Կարսի, Արդահանի, Իգդիրի մարզերում, որոնց բնակչությունն արտագաղթի հետևանքով շարունակ նվազում է:

Հայ-թուրքական մերձեցման միտումները որևէ արդյունքի չհանգեցրին: Սակայն պաշտոնական Երևանը, ընդառաջ գնալով այդ միտումներին, նպաստեց հայ դիվանագետների հետ Թուրքիայի երկխոսության պահպանմանը: Սա, ինչ խոսք, կարևոր հանգամանք է Թուրքիայի համար: Նա, պահպանելով երկխոսությունը, Անդրկովկասում պահպանում է իր քաղաքական ակտիվությունը, առևտրատնտեսական հարաբերությունների հեռանկարով հրապուրում Հայաստանին՝ արտաքին քաղաքական կողմնորոշման առումով նրան կանգնեցնելով երկընտրանքի առջև և հայադրբեջանական հակամարտությանը միջամտելու հնարավորություն է ձեռք բերում: Ահա թե ինչու Թուրքիայում կառավարության յուրաքանչյուր հերթափոխին, որպես կանոն, հետևում են Հայաստանի հետ մերձեցման նոր միտումները:

ՎԵՐՋԱՐԱՆ

Թվում էր, թե ՆԱՏՕ-ի ընդարձակումը, որ ռուսական ազդեցության ոլորտների հետագա կրճատման հեռանկարներ բացեց ԱՄՆ-ի առջև, տալով նրան Կովկասն ու Միջին Ասիան ամերիկյան կենսական շահերի գոտի հայտարարելու հնարավորությունը, էսպես կփոխի Անդրկովկասում ուժերի հավասարակշռությունն ի վնաս Հայաստանի: Իսկ Անդրկովկասը թուրքական գործոնի միջոցով ռուսական ազդեցությունից պաշտպանելու առաջադրանքի փոխարինումը Ռուսաստանին տարածաշրջանից վտարելու ամերիկյան առաջադրանքով, որպես վտարման միջոց կարևորելով Ադրբեջանի դերը, կնպաստի Թուրքիայի ձերբազատմանը Հայաստանի հետ հարաբերությունների առնչությամբ իր վրա գործադրվող ԱՄՆ-ի «ճնշումներից», ինչպես նաև Ադրբեջանի և ԱՄՆ-ի միջև խուսաճանակելու պարտավորությունից: Անդրկովկասում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդումն ու ամերիկյան քաղաքական ծրագրերում Ադրբեջանի նշանակության աճը միաժամանակ ենթադրում էր, որ Թուրքիան ձերբազատվելով ճնշումներից, Հայաստանի հետ մերձեցման միտումներ հանդես բերելու փոխարեն, կստանձնի նրան ճնշողի դերը:

Սակայն 1997թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում ստորագրված «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» պայմանագիրը արմատականորեն փոխեց իրադրությունը: Այդ պայմանագրով, որպես Ռուսաստանի ռազմական դաշնակցի, Անդրկովկասում կարևորվեց Հայաստանի դերը: Սա փաստորեն ԱՄՆ-ի քաղաքական ծրագրերում Ադրբեջանի հարաճուն դերը հակակշռելու լուրջ հայտ էր, ինչը Անդրկովկասում ստեղծելով ամերիկյան ազդեցության թուլացման նախադրյալներ, պայմանագրի կողմերին տալիս է ուժերի հավասարակշռությունը տարածաշր-

ջանում վերականգնելու լայն հնարավորություն: Միաժամանակ դրանով սահմանափակվում են Դայաստանի վրա ճնշում գործադրելու Թուրքիայի հնարավորությունները: Ըստ երևույթին վերոհիշյալ պայմանագիրը Թուրքիայի կառավարող շրջանակներին կողդի կատարել համապատասխան հետևություններ: Չի բացառվում, որ որոշակի փոփոխությունների ենթարկվեն բուրջական պետության հայկական քաղաքականության դրույթները: Դրա նությունը, սակայն, հազիվ թե փոխվի: Թուրքիան, անկախ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից, մոտ ապագայում ևս կառաջնորդվի «երկկողմ շփումները հայերի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությամբ» շարունակելու սկզբունքով:

Այսպիսով երկկողմ շփումները շարունակելու արդյունավետ միջոցը կոչտ դիրքորոշումը չէ: Դա հավասարապես վերաբերում է նաև Թուրքիայի դիրքորոշմանը դարաբաղյան հարցում: Դարաբաղի ժողովրդի մոտ 10-ամյա հերոսական պայքարը ցույց տվեց, որ ճնշումների քաղաքականությունը և սպառնալիքների լեզուն չեն կարող արդյունավետ գործիք ծառայել դարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում: Թուրքիան հարկադրված կլինի հաշվի նստել քաղաքական նոր իրողությունների հետ, այդ թվում և Դարաբաղի հայության համառ պայքարում ձեռք բերած, արյունով նվաճած քաղաքական արդյունքների հետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ազգ», 20 մարտի 1991:
2. Լույն տնդում:
3. Լույն տնդում:
4. «Ազգ», 27 ապրիլի, 1991:
5. «Երկիր», 14 հուլիսի, 1994:
6. Լույն տնդում:
7. «Ազգ», 20 մարտի, 1991:
8. Ն. Գովհաննիսյան, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Գալաս տանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր. 1996, թիվ 16, էջ 14:
9. «Ազգ», 25 դեկտեմբերի, 1991:
10. Ն. Գովհաննիսյան, նույնը, էջ 15:
11. «Hürriyet», 15 Kasım, 1991.
12. Լույն տնդում:
13. «Ազգ», 23 նոյեմբերի, 1991:
14. Լույն տնդում:
15. «Ազգ», 16 նոյեմբերի, 1991:
16. «Ազգ», 7 դեկտեմբերի, 1991:
17. Լույն տնդում:
18. «Ազգ», 1 փետրվարի, 1992:
19. «Ազգ», 12 փետրվարի, 1992:
20. Լույն տնդում:
21. «Hürriyet», 4 Şubat, 1992.
22. «Ազգ», 12 փետրվարի, 1992:
23. «Hürriyet», 2 Mart, 1992.
24. «Ազգ», 7 մարտի, 1992:
25. «Hürriyet», 5 Mart, 1992.
26. «Ազգ», 7 մարտի, 1992:
27. Լույն տնդում:
28. Լույն տնդում:
29. Լույն տնդում:

30. «Hürriyet», 23 Eylül, 1992.
31. «Cumhuriyet» Haftalık, 13-19 Mart, 1992.
32. «Hürriyet», 6 Nisan, 1993.
33. Kamuran Gürün, Turco-Armenian Relation, Eurasian Studies, Vol. 13, N 1, Ankara, Spring, 1996, p.62.
34. Ե. Չաքրյանի սյուն, նույնը, էջ 16:
35. Նույն տեղում:
36. Gerçek, Haftalık Haber Dergisi, V/1, Sayı: 13, 14 Haziran, 1992, s. 11, 12.
37. Ibid, s. 7.
38. Ibid, s. 10
39. «Hürriyet», 23 Aralık, 1993p.
40. Ibid.
41. Ibid.
42. H. Uluengin, Kafkasyada Savaş ve Barış, «Hürriyet», 18 Ocak, 1994.
43. Այլ մասին տես՝ Н.Оганесян, "Карабахский конфликт. Этапы. Подходы. Варианты решения", Ереван, 1997, с. 55-57.
44. «Hürriyet», 22 Agustus, 1993.
45. H.Uluengin, Kafkasyada...
46. «Hürriyet», 22 Agustus, 1993.
47. «Երկիր», 7 հոկտեմբերի 1993:
48. Յ.Չաքրյան, Ուսատան-Յուրթի հակասությունները սրվում են, «Ազգ», 5 դեկտեմբերի 1995 49:
49. «Hürriyet», 25 Şubat, 1995.
50. «Hürriyet», 31 Ocak, 1993.
51. «Cumhuriyet», 25 Şubat, 1995.
52. Ibid.
53. «Ազգ», 1 նոյեմբերի 1997:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՈՍՑԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ ՍՈՍՑԻՆ	
Հայ-թուրքական հարաբերությունների սկզբնավորումը հետխորհրդային շրջանում	10
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
Հայ-թուրքական մերձեցման միտումներն ու ռազմաքաղաքական իրավիճակի սրումը Լեոնային Ղարաբաղում	19
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
Հայաստանի հետ մերձեցման թուրքական միտումների էությունը	33
ՎԵՐՋԱԲԱՆ	40
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	42

Տ Ե Ր Ա Մ Ի Ի Մ Ճ Ա Կ Ա Ր Չ Ա Յ Ի Ն Ի Ա Վ Ա Ր Ր .

Հ Հ Գ Ա Ա Ա Ր Կ Ե Լ Մ Չ Ի Մ Ա Տ Ր Յ Ա Ն Ի Յ Ա Մ Ի Ա Ն Ա Ի

Ա Շ Խ Ա Ա Ա Կ Ի Գ Վ Ա Ր Գ Գ Ե Ս Գ Ա Ս Պ Ա Ր Ե Ա Ն

ՀԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՆ. ԳՐԱՆ.



FL0076627

[1880 97]

A $\frac{11}{85080}$

Չարիյան Հակոբ (ծնվ. 1953, Թուրքիա): ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու: Զբաղվում է ժամանակակից Թուրքիայի, Անդրկովկասի և Միջին Ասիայի խնդիրներով: Հեղինակ է մի շարք աշխատությունների, այդ թվում. «Ազգային հարցի ակունքները Թուրքիայում», (Երևան 1994), «Միջկուսակցական սլայքարը Թուրքիայում և բանակը, (60-90-ական թթ.)», (Երևան 1995), «Քաղաքական կուսակցությունները Թուրքիայում», (Երևան 1996), «Հայ-Թուրքական հարաբերությունների զարգացման ընդհանուր տրամադրանքներ», (Երևան 1997) և այլն: